


Casey's

891.99  
4-88



891.99

4 - 88

ար.

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐԴԻՆՅԱՆ

8 NOV 2011

## ՀԱՏԵՎԻՑԻ

կազմոյ

ԱՆՈՒՆ ԿՈՒՐԴԻՆՅԱՆ

Խմբագրություն և առաջարան

Ա.Ա. ԱՍԱՏՐՅԱՆԻ

38

ԹԵՍԱԿԱՆ ՀԽՍՀ  
ՅԵՐԵՎԱՆ 1939

29.05.2013

36702

28+2



6132

39

Ш. КУРГИНЯН  
ИЗБРАННОЕ  
Гиз. Арм. ССР, Ереван, 1939



ՇՈՒՏԱՆԻԿ ԿՈՒՐՂԱՆՅԱՆ

## ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Իր կենդանության որով Շուշանիկ կուրղինյանը բանաստեղծությունների միայն մեկ ժողովածու յէ հրատարակել, այդ նրա հայտնի «Արշալույսի զողանջներ»-ի ա. սքրակն եր՝ լույս տեսած 1907թ.: Բանաստեղծուհին պատրաստում եր հրատարակելու նաև յերկրորդ ոլրակը՝ նույն ընդհանուր վերնագրով, սակայն ցարական վոստիկանական գրաքննության խստություններն արդելք հանդիսացան գրան: Իսկ այնուհետև կուրղինյանը բախտ չունեցավ նոր ժողովածու հրատարակելու:

Ներկա ժողովածուն կազմելիս ձեռքի տակ ենք ունեցել «Արշալույսի զողանջներ»-ը և պարբերական մամուլում տպագրվածները: Ընտրված բանաստեղծությունները համեմատել ենք հեղինակի ձեռագրերի հետ և դասալորել ժամանակադրական կարգով: Բանաստեղծությունների գրության թվականները նշված են համաձայն բնագրերի:

Սույն «Հատընտիր» ժողովածուն լույս է ընծայվում բանաստեղծուհու մահվան 12-րդ տարեկարգի առթիվ:

## ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐԴԻՆՅԱՆ

(1876—1927)

Հայ նշանավոր բանաստեղծուհի Շուշանիկ Կուրդինյանը ծնվել է 1876 թվի սպոստոսի 18-ին Ալեքսանդրապոլում (այժմ Լենինական), արհեստավորի ընտանիքում:

Մինչև 1903 թիվը Կուրդինյանն ապրել է իր ծննդավայրում, ուր և ստացել է սկզբնական կրթություն: 1896 թվին նա փորձում է Սոսկվա դնալ սւասմը շարունակելու համար, բայց չի հաջողվում և այնուհետև նա իր կրթության պակասը լրացնում է ինքնազարդացման ճանապարհով:

Դեռ մանկական տարիներին բուռն սեր և զարթնում Կուրդինյանի մեջ դեպի ժողովրդական ստեղծագործությունը և դեպի պոեզիան ընդհանրապես:

1899 թ. «Տարագ» շարաթաթերթում (№ 30) տպադրվեց Շ. Կուրդինյանի «Վերջալույսի վառ չողերով» բանաստեղծությունը, վորով և սկսվում է նրա դրական գործունեյությունը:

1903 թվին բանաստեղծուհին Ալեքսանդրապոլից տեղափոխվեց Թուստով՝ Դոնի վրա: Սա թուստատանի բանվորական հեղափոխական շարժման ոջախներից մեկն եր: Ապրելով այս նոր միջավայրում և հանդիսատես լինելով հեղափոխական-քաղաքական մեծ վերելքին, Կուրդինյանը հողեղիս ներդրավվում է պայքարի հորձանքի մեջ և իր ստեղծագործություններում անդրադարձում է այդ պայքարը:

Պատասխանելով Յուրի Վեսելովսկու անկետային, Շ. Կուրդինյանը զրում է. «Յես ինձ շատ պարտական եմ զգում ուստական կյանքին, վերածննդի փոքրիկություններում և հատկապես

ռուսական պրոլետարիատին; Ռուսաստանն իմ ժաղաքական մուտիվների հայրենիքն ե»\*):

Իր ինքնակենսազրության մեջ (գրված 1920 թվին) Կուրդինյանն ավելի մանրամասն սկասմում է այն մեծ ու վճռական ազգեցության մասին, վոր ունեցել է ռուսական սլրուետարիատի հեղափոխական սպայքարն իր վրա, վոր 1905 թվականը յեղել է իր կյանքի ու ստեղծագործության «մեծ բեկման տարին»:

«1905 թվականի յեղակ իմ վերածնուրյան տարին: Ռուսական հեղափոխությունը և պրոլետարիատը բացին իմ առջև պրոլետարական իմաստության բոլոր գաղտնարանները և իմ ազգասիրական յերգերն որեցոր քոչնեցին»— գրել է Կուրդինյանը:

Յեղ իրոք, ռուսական առաջին հեղափոխական տարիներին 1905—1906—1907 թվերին Կուրդինյանը վերածնվում է: Նա կարդում էր հեղափոխական սոցիալիստական դրականություն։ Նա թերեւս, առաջին հայ կինն էր, վոր այն ժամանակ ձեռք է բերում ու կարդում Մարքսի «Կապիտալ»-ը։ Նրան դրալում է պրոլետարիատի հանձարեղ գորզի՝ Մ. Գորկու ստեղծագործությունը և նա վոչ միայն կարդում է Գորկու յերկերը, այլև փորձում է նրա հետ անձնական կազ հաստատել նամակագրությամբ։ Նրա վրա ազդում են նաև առաջին հայ պրոլետարական մեծ բանաստեղծի՝ Զակոր Զակորյանի աշխատանքի ու հեղափոխական կովկի յերգերը, ինչպես և խոալացի նշանավոր բանաստեղծուհու՝ Աղա Նեղուու ստեղծագործությունները, վորոնց լավագույն մասը հեղափոխության նախորյակին (1903—1904 թ. թ.) թարգմանված էր հայերեն, չնորհիվ։ Հ. Զակորյանի։

Ուշադրավ է, վոր Շ. Կուրդինյանը ստեղծագործական բուռն թափ ապրեց հատկապես ռուսական առաջին հեղափոխության տարիներին։ Նրա տաղանդը կայծակի պես փայլատակեց և ամպրոպի պես վորոտաց առանձնապես այդ շրջանում։ Ուշադրավ փաստ է նաև այն, վոր նրա բանաստեղծությունների առաջին ժողովածուն «Արշալույսի զողանչներ» վերնադրով լույս

\*) Ю. Веселовский— Русское влияние в совр. арм. литературе. 1909 г. стр. 26.

տեսալ 1907 թվին, այսինքն հեղափոխության վայրեջքի սկզբ-ըն, յերբ չուտապ վրա ելին հասնում ու ռեակցիայի դաժան տարբիները։

Շ. Կուրդինյանի պոեզիան 1905—1907 թ. թ. ռուսական առաջին հեղափոխության ծնունդ և նրա գերիշխող մոտիվը բանվոր դասակարգի կյանքն ու պայքարն է։ Այդ կողմով Կուրդինյանը հայ պրոլետարական—հեղափոխական պոեզիայի սկզբանական վերաբերյալ է, յերկրորդը չ. Հակոբյանից հետո։

Հայկական պոեզիայում Շ. Կուրդինյանը Հ. Հակոբյանից հետո յերկրորդն էր, վոր վոչ միայն տեսավ բանվոր դասակարգի անտառների ծանր վիճակը կապիտալիզմի պայմաններում, վոչ միայն պատկերեց տիրող սոցիալական կյանքում յեղած սուր հակագրությունը բուրժուազիայի ու պրոլետարիատի միջև, այլ և արձականքեց պրոլետարիատի հեղափոխական կովկն («Հանգըրեկը ջահերը», «Հետ տար քո խաչը», «Բանվորները», «Պատկերը», «Բանվորական թաղամասում», «Հակապատկերները», «Բաղզից արհաքամ»), «Անգործավորի յերազը» և այլն)։

Դ Սակայն պետք է նկատել, վոր Կուրդինյանը հեղափոխության ընթացքում (ինչպես և հետադայում) հանդես է յեկել վոչ վորովես պրոլետարիատի հետևողական յերգիչ։ Յեթէ Հ. Հակոբյանը հանդես էր յեկել վորովես բոլշևիկ բանաստեղծ, հեղափոխական մարքսիզմի աշխարհայացքով, ամբողջապես կլանված բանվոր դասակարգի կյանքով ու պայքարով, ապա Կուրդինյանը ներկայանում էր, վորովես հայկական մանր բուրժուազիան դեմոկրատիայի առաջավոր ու ազնիվ ներկայացուցիչը պոեզիայում, շատ մոտ կանդած պրոլետարիատի ազնիվ ուղեկցի ու դաշնակցի ստեղծագործություն է։

Բոլորովին պատահական չե Շ. Կուրդինյանի համար, վոր նրա «Արշալույսի զողանչներ» ժողովածվում՝ «Բանվորները», «Միջազգային յերգ» և այլ նման բանաստեղծությունների հետ միասին, կարելի յե հանդիպել նաև «Վաթանի» վշտով ու կարոտով համակած յերգերի, ինչպես որինակ «Զկա Ալադյազ», «Ալբուլին», «Աշնան յերգերից», «Փարվանայի դիշերներից» և այլն։

Պետք է նկատել սակայն, վոր ի պատիվ բանաստեղծուհու, նրա մոտ «վաթանի» կարոսի յերգերը չեն խրացնում պրոլետարական կռվի «զանդակների զողանջը», վորը նրա պոեզիայում ազգային «ազատության զողանջներից» միշտ ավելի բարձր, ապելի ուժուն է հնչում:

Կուրդինյանի մոտ ի վերջո, իր ժողովրդի ազգային վիշտը միախառնվում է բոլոր ազգերի աշխատավորների սոցիալական վշտին, վորից բանկվել և հասարակական-քաղաքական պայքարի կրակն ուղղված ամեն մի շահագործման ու ճնշման դեմ: Այդ տեսակետից ուշազրավ են կուրդինյանի «Միջազգային յերգը», («Արշալույսի զողանջներ»-ում) և «Յերկրի ձայնը» վերնադրով բանաստեղծությունը, վորը տպված է «Յերկրի ձայն» ժուռանում (1907 թ. № 13) Արքինենիկ» ստորագրությամբ:

Մեր քննադատության մեջ մինչև վերջերս ել այն սխալ կարծիքն է հայոնվել, թե իր կուրդինյանը հեղափոխության վերելից հետո, հեղափոխության վայրեջի տարիներին ուսակցիայի շրջանում «նահանջում» և իր հեղափոխական պոեզիայի դիրքերից դեպի սիրո, վշտի հոռետեսական մրմունջները», թե՝ «Կուրդինյանն այնուհետև հուսուլքման ու զարտության յերգեր և յերգում» թե՝ «նա այլևս չեր տեսնում լուսավոր ավեր, վոր ժամանակ այնքան ջերմորեն յերգում եր» և այլն, և այլն\*\*):

Ի հարկե նրա մոտ չկա հայ մեծ պրոլետարական յերգչ՝ չ. Հակոբյանի աներեր մարտունակությունը սեակցիայի տարիներին, — բայց կա «Հարատե կովի» դպացումը, «գեւպի վեր» թռչելու կամքը և հալատ ու սեր զալիք նոր մրրիկների հանդեպ: Բանաստեղծուհին նախատում է կովից վախչողներին և դեպի անում շարունակել պայքարը հաստատուն հակատով.

\*) Ի գեղ նկատենք, վոր նույն ժուռանում 1907—1908 թ.թ. Արքինենի ծագմանը, վոր նույն ժուռանում 1907—1908 թ.թ. Արքինենի ծագմանը, առակ առվել են Շուշանիկ կուրդինյանի հեղափոխային մոտիվով ծագմանը մի շարք այլ բանաստեղծություններ ևս («Հոր չե թե մենիմ», «Ապագա ծիթենին», «Կեցցեն շարքերը», «Վայ մեզ, վախկուները», «Դեկտեմբերի որերից», վոր պատկերում և Մոսկվայի 1905 թ. գեկտեմբերյան դիմում առվատամբությունը):

\*\*) Տես՝ ընկ. չ. Ակրտչյանի հողամածը Շ. Կուրդինյանի մոտին՝ «Խորչըդականություն» 1939 թ. № 3—4, էջ 258—259:

«Յեկ կովենիք յեղբայր, նոր կյանիքի համար, թեկ վիրավոր ընկեննիք մեծ կովում, Մեզ հետևողին հույս տպու համար Զոհվենիք հալատով, ո՞ւր նս դու փախչում»:

Բանաստեղծուհու աշքի առաջ ու ուսակցիան իր հաղթանակն առնում քաղաքաների ու դյուլերի հրապարակներում բարձրացած կախաղանների շարքով: Բանաստեղծուհին տեսնում էր այդ մեծ վշտով յերգում՝ «կախաղանիք ահալու սյունից», «Ճոճկող» «աղնիվ մարտնչողների» հերոսական մահը, բայց յերբեք չեր չուսահատվում: բանաստեղծուհին հավատում է, վոր վոչ կախաղանները, վոչ բանտերը չեն կարող ինդղել հեղափոխության «Մեծ զաղափարը», վորի համար «զոհվեցին սիրով» անթիվ մարտիկներ, «աղնիվ մարտնչողներ»: Նրանք զոհվեցին, այու:

«Բայց միտք մնաց... նրան խեղդելու դժոխքի վորդին չունի մեքենա— Յեկ նակատագրի զարկին ահարկու նա յե լինելու վահան պողպատյա»:

Հոկտեմբերյան հեղափոխությունը կուրդինյանը վողջունեց նարկովում, ուր դտնվում էր նա այն ժամանակ: Այդ մեծ հաղթանակը ստեղծակործական նոր խանդակառությամբ լցորեց արդեն մոտ կես դար ապրած բանաստեղծուհու սիրտը: Ինչպես ինքն է ասում իր «Վողջույն քեզ» վոտանավորում, նրա «հոգու բոլոր զանգակները» հորից զողանջնեցին» յերդելով «նոր որերի» կյանքն ու պայքարը:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո տաղանդավոր բանաստեղծուհին շատ կարծ կյանք ունեցավ: Նա հիվանդ էր ու ծերացած, բայց այնուամենայնիվ նա արձականքեց նաև իմոր հըրդային շրջանի կյանքին ու պայքարին:

Կուրդինյանը մեռալ 1927 թ. նոյեմբերի 24-ին Յերևանում, 51 տարեկան հասակում:

Բանաստեղծուհին անցավ բեղմնավոր գրական դրսունեյության մոտ 30 տարվա ուղի, թողնելով բանաստեղծական մի հազրային գրականություն»:

բուստ ժառանգություն, վորը նշանակալից տեղ է դրավում  
հայկական պոեզիայի զարդացման պատմության մեջ:

Կուրղինյանի տեղը մեր պոեզիայում վուոչված է վոչ միայն  
նրանով, վոր նա Հակոբ Հակոբյանի հետ միասին նոր հե-  
ղափոխական քաղաքական լիրիկայով հարստացրեց մեր գրակա-  
նությունը, այլ և նրանով, վոր նա ևս՝ տեղ-տեղ հավասարվե-  
լով բանաստեղծական խոսքի իրեն ժամանակակից մեծ վարպետ-  
ներին—Ավ. Խսահակյանին ու Վ. Տերյանին, ավել և քանաս-  
տեղծության բարձր արվեստի նմուշներ:

Գրական լեզվի մաքրություն, վոճի պարզություն, վոտա-  
նավորների տաղաչափական բազմազանություն, խորը լիրիզմ,  
հուղականություն, խոսքի հմայիչ յերաժշտականություն, դե-  
ղեցիկ համեմատություններ ու ճոխ պատկերավորություն—ա-  
հա այս գծերով ե ոժտված Շ. Կուրղինյանի լիրիկան:

Կուրղինյանի ստեղծագործությունը հայկական պոեզիայի  
հորդառատ գետի կարկաչահոս վտակներից մեկն ե, վորն եր  
սկիզբը ժողովրդական ստեղծադործության աղբյուրներից և  
առնում, տողորված ե ժողովրդի վշտով ու ոլայքարի հրով, և  
այս պատճառով ել կենսունակ ե ու մնայուն:

ԱՍ. ԱՍԱՏՐՅԱՆ

Նոյեմբեր 1939 թ.  
Յերեան.

## ՅԵՍ ԸՄԲՈՍՏԱՑԱ

Յես ըմբռատացա... խավարը լացեց  
Խիզախ բռունցքիս հարվածների տակ,  
Խորը դավադիր գիրկը նա բացեց,  
Խորը խոստացավ լինել հպատակ...

Նա սիրել եր ինձ այնպես խանդավառ  
Յեվ բերել աշխարհ դժվար յերկունքով.  
Սչերս կապած՝ բայց հոգիս կայտառ  
Դգվել եր ամվերջ, սնուցել կրծքավ:

Նա աղջամուղջու մռայլ գիշերից  
Վոչիմչ չեր պահել ինձամից անտես,  
Կուրացած տենչով միշտ իմ քշերից  
Համբույր ե բաղել գքառատ մոր պես:

Յես ըմբռատացա— լույսը սիրեցի  
Յեվ խելացնոր հարվածներիս տակ  
Խավարը ըմկա՛վ... յես... յես հաղթեցի  
Փա՛ռք ու պատիլ ինձ, կեցցե՛ հաղթանակ...

Յեզ, վոր ապրում եք խավարիմ գերի  
Յես իմ ուղիով քողել եմ նշան—  
Բազում ողակներ իմ շղթաների  
Վոր փշթելիս ծաղկեցրիմ շուշան:

Ի՞ն, դրա ել յեկեֆ՝ յեկեֆ լույսի մոտ.  
Անեծք— ով չուզե զատկել խավարից.  
Յես այստեղ՝ հասա՝ ծագեց առավոտ.  
Շուրջս լույս, ազատ... Փառք ու պատիլ ինձ...

## ԱՐՄՎԻ ՍԵՐԸ

Ժեռ քարափին արծիվ նստավ,  
Արծիվ նստավ ու յերգեց.  
Զորի միջին աղջիկ տեսավ—  
Նշխուն տեսնեն զարնվեց:

«Հե՞յ, զա՞ն աղջիկ, մարա՛լ աղջիկ,  
Ափառ'ս քոչել չգիտես.  
Եդ ծմակում լովիկ-մնչիկ  
Պիտի քոշնես ծաղկի պես:

Թե քոչեյիր— իմ ժայռերին  
Քեզ քագուհի կընտրեյի,  
Քուն գար աչքիդ՝ իմ քեւրին—  
Անուշ յերգով կորքեյի:

Եդ աչքերեդ՝ ինձ սև զիշեր,  
Ժպիտդ՝ վառ արեգակ,  
Անձեր յերկինք քեզ չեր իշխեր  
Ու կը լիներ հպատակ:

Յարար քոչել հե՞չ չգիտես,  
Քեզ ո՞վ ծնեց առանց քեվ.  
Յարար կյանինմ հե՞չ ուզած չես  
Ոդում քոչել միշտ քերև...»

Եսպես յերգեց ժեռ քարափին  
Հպարտ արծիվն ակայուման.  
Թուավ, անցավ սարեն, ձորեն,  
Լալով բախտըն աղջկան:

## ՄԻ ԳԻՇԵՐ

Յես անհույս, մինչև լույս նստեցի  
Լերկ ու մերկ ժայռերի գագաթին,  
Քեզ, Մանքաշ, սրտամաշ դիտեցի—  
Տեսա քեզ ցալակեզ, սև, մքին:

Մտածելու ու ծաղկու քո կրծքին  
Ծեր Մորփեն դալկարեմ կը շրջեր.  
Քո հոգուն՝ միշտ անեռն, ցալագին,  
Զով ժամին իր մյանին կը սուլեր:

Կարկամած Արագած վերելից,  
Ա՛յս, կուլար միալար ու տրտում,  
Իր բոլոր հիճ ու նոր ցալերից  
Կոլորեր սև ամպեր զենիքում:

Յես տեսա աղամա մուրն իջալ,  
Լուռ հանգան լուսընկա, զինջ աստղեր,  
Յեվ կար-կար շաղակար ցողն իջալ,  
Դողացին, տեղացին վառ շողեր:

Յես տեսա ամսի պես վեր յելան  
Անփրկանք տառապանք քո սրտից.  
Քեզ ժպտաց լուսարաց վաղորդյան  
Բոլորակ-արեգակ լեռմերից:

Պննված, հույս առած դու վսոնահ.  
Գգվեցիր լայն, անծիր յեթերին  
Ախ, այդպես, մանկան պես կըժառու  
Նզբայված ու խարված խեղն գերին:

Յես յերկար վշտահար նստեցի  
Լերկ ու մերկ ժայռերի գագարին.  
Քեզ, Մանրաշ, սրտամաշ դիտեցի  
Խոկերով, մնեքերով՝ սև, մքին...

1905

## ՄԵՆՔ ԵԼ ՄԻԱՆԱՆՔ

Ես փուչ աշխրքի դարդն ու բալեն  
Հերի՛ք մեր ուսին իր բեռը շարե.  
Աղի արցունեն ել անդադար լալեն  
Հերի՛ք աչքերիս ցոլքերը մարե:

Ես բիրտ որենին հերիք դուլ-դուրքան  
Լինեն մեր գարնան ալ-կանաչ որեր,  
Ու չորս պատի մեջ մոռցված, անպաշտպան.  
Հերի՛ք մեր դիմաց փակվեն բաց դռներ:

Արի՛ քուրիկ ջան, ձեն տանիք աշխարքին,  
Մեր ընկերներին քեզ վոտքի հանենի.  
Ես սև, դարախաշ անվայել կյանքին  
Մի յելք, մի ուղիղ ճամքա բաց անենի:

Արի՛, քուրիկ ջան, մենիք ել միանանիք,  
Են մենծ սուրբ կովին եղնինիք մասնակից...  
Հերի՛ք շզբայված ու գերի մնանիք  
Դուման մտերով, շշմած զրկանիքից:

Թող են բախտավոր մեր տղամարդիկ  
Շատ չը հայրտնան վոր առաջ անցան,  
Ենոնիք առանց մեզ, հավատա՛, քուրիկ,  
Շուտ տեղ չեն հասնի— կընկնեն ցիր ու ցան:

Յերբա՛նիք քուրիկ ջան, անվա՛խ միասին  
Մեր արդար դաստին գոհած ամեն բան,  
Են ազատ կյանքի սրբազն լուսին  
Ամենին ել հավսար, կովողը արժան:

1905

## ԴԵԿԱՏԵՄԲԵՐԻ ՈՐԵՐԻՑ

Յես նայում եյի ապշած, զարմացած...

Ահա ամբոխը— և՝ ջահել, և՝ ծեր

Բարբիկադներին իր կուրծքը տված

Կոփ և մղում, խիզախ, անվեհեր...

Ծերուկ բանվորի դողդոչ ձեռքերին

Կարմիր դրոշն եր հպարտ ծածանվում...

Յեվ պայքյունների ահեղ վորոտին

Ազատ յերգերի թիճդը խառնվում:

Յես ուզում եյի հաղքանակն յերգել

Այն ջահելների դեռ կյանք չտեսած,

Վոր այնպիս անվախ գիտեյին մեռնել.

Սակայն հուզմունքից ձայնս եր նվազած...

Մի ինչ վոր հզոր անհայտ զորություն

Խմ քույլ ծնկները գետնին եր զամում

Ու մի սրբազն շշովկ իմ հոգուն

«Չոքի՛ր, աղոքի՛ր...», — իսմաց փոխում...

Յեվ ծունկ չոքեցի նահատակների

Շարե-շար ընկնող դիերի առաջ...

Ու հավերժ փակվող պայծառ աչքերի

Կոտակը սրտումս... յես անցա հառաջ...

1905

6/32  
39

## ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՂՈՂԱՆՁՆԵՐԸ

Դողանջո՞ւմ են զանգակները... դողանջում են  
ամեն ոք,

Տառապանքի կոկիծներից յերգեր հյուսում ահավոր—

Տանջված յերկրի ցավոտ կրծքից ըմբռատ կովի

կոչն ուժգին

Տարածվում է ամեն խալում ահեղ քափով ամենքին:

«Դե՛հ, վեր կացեք— ում սրտում դեռ մարդկային  
կոչման արժան գեր մի նշույլ անմեկին  
թրբում է տանջանքների բռվի մեջ,  
Վշտից, ցավից, գերությունից դեռ անշեց:

Դե՛հ, վեր կացեք— ում սրտում դեռ բռնության  
Այրող ձեռքից իդեալները կը մխան—  
Ով հոգնել ե կորաքամակ՝ ույժի դեմ  
Միշտ սողալուց, թմրած հոգով և անգեն:

Դե՛հ, վեր կացեք ու միացեք անխափան  
Ըմբռատ հոգիք՝ զրկանքներից ցեր ու ցան.  
Ով վոր լինիք, ուր վոր լինիք՝ միասին  
Վողջունելու ազատության սուրբ լույսին...»

Դողանջո՞ւմ են զանգակները... դողանջում են  
ամեն ոք

Տառապանքի կոկիծներից յերգեր հյուսում ահավոր—

Տանջված յերկրի ցավոտ կրծքից ըմբռատ կովի

կոչն ուժգին

Տարածվում է ամեն խալում ահեղ քափով՝ ամենքին:

1906

Հատընտիր— 2



## ԿԸ ՀՅՈՒՍԵՄ ՅԵՐԳԵՐ

Բարձիր ուսերիս ք բեռը— կոկիծ  
Վողբերն ու նիշեր անհուն տանջանիդ,  
Վհատ կասկածդ և սրտիդ անրիծ  
Բուռ ցավերը և խաչը կյանիդ:

Թող կաթիներով ննշման կապանից,  
Կաթեն սրտիս մեջ տենչերդ մարած,  
Թանձր խավարում, գլխիդ անձկալից  
Ըմբոս խլրտման ծիւերը խամրած:

Յես ք սար-բեռան կու բեռնակիր,  
Կը սուզվիմ վշտի անհատակ ծովում,  
Խոկ դու աշխարհում նորից արծարծիր  
Սուրբ ազատության իդեալի յերդում...

Յեվ յերբ ցավի տեղ այդ ազատության  
Տիրե երճվանքը յերկրի յերեսին  
Փշրին շդրաներ, բանտ ու կախաղան,  
Հնչեն շեփորներ նոր արշալույսին—

Այն ժամ լեռ-բեռդ անհատակ ծովի  
Խորունկ խորքերում վշտիս հետ քաղած  
Յես վեր կը բռչեմ, կը փարվիմ հովի,  
Ալու քեներին քերե, քե տոած:

Կը հյուսեմ յերգեր ազատ որերի  
Անմահ, վոգեշունչ, բողբոջ հույսերից.  
Կերգեմ նոր հիմնը— հավասարմերի,  
Լույսի ծնունդը՝ բզխած խավարից:

## ՏԱՐ ԻՆՉ, ՄԵՇ ՀՈՍԱՆՔ...

Ինչպե՞ս, ո՞ւր փախչել— վոր աչքիս առաջ  
Չգան ու շարվին արյունու գոհեր.  
Վոր գիշեր-ցերեկ չլսեմ հառաչ՝  
Սովի ու վշտի մորմոք գուժարեր:  
Վոր շուրջու տիրող անարդարության  
Ույժն անպատիծ սիրոս վիրավոր՝  
Չմաշե անվերջ ցավը հոգեհան  
Չիբշաքաղի մարմինս ամեն որ:  
Ինչպե՞ս մոռացվել, չզգալ, չայտավել,  
Դաղված աչերիս տալ մի քիչ դադար.  
Ուսկից ույժ գոնել— և չկարենցել  
Նմանիս լքման, տանջանքին— ամենար:  
Բայց արժե՞ փախչել— պահվել յերկունքի  
Ըմբոս վայրկյանին, տարերքի ահեղ,  
Տապ բռնկումի մեծ ավետիքի  
Չլսել շոհնդ— կռվի փառահեղ:  
Ընկնումը— կորչի՛... քող լինի այնպես—  
Ինչ պիտի լինի... տա՞ր ինձ, մեծ հոսանք—  
Դանգս— ջախջախիր. ք փրփրաքեզ  
Գոռ ալիբներով՝ կուլ տուր և իմ կյանք:  
Խփիր, շպրտի՛ր վշտի ժայռերին  
Կուրծքս— քրքրե՞... քող իմ արյունն ել,  
Արցունքս, հառաչ ձուլվին, խառնվին՝  
Թափ տան հոսանքիդ— քոդ մեռնիմ ջակել...  
Տա՞ր ինձ... ցավերի խարույկ բռվի մեջ  
Քող յեռա հոգիս. ել մեկիկ-մեկիկ

Զծիւս սրտիս մրուրն անշեց—  
Տա՛ր— ուր լափվում են՝ իդեալը, մարդիկ։  
Յես քա՛փն եմ սիրում լոկ մի հարվածի։  
Կոփը— լինել կամ չըլինելու։  
Վերքը— մահացու, ցանցն արկածի։  
Ուր ակեբա՛րբն ե— պատասխանառու...

1906

## Մ Ե Ր Ո Ր Ե Ր Ը

Լույսը բացվեց— դռդրոջեցին  
Ցող-շողեր,  
Վագեց քամին դալար դաշտով  
Անտարքեր։

Քնիատ ծաղիկն որորվելով  
Շնկշնկաց,  
Սարի լանջից ազըյուրը ջի՛նչ  
Կկլաց...

Ի՞նչ պատահեց, ո՞ւմ քաղեցին  
Լուր դաշտում,  
Այն ի՞նչ քումք ե, ուր մարդիկ են  
Արտավում...

Հա... այդ նա ե— ըմբռոտ հոգին  
Քաջարի,  
Վոր հանդգնեց ել չմնալ  
Խեղն, գերի..

Հա՛, այդ նա ե, վոր իր մահով  
Վագածում  
Ազատության դափնին խլեց  
Անքառամ...

1906

## ԲԱՆՎՈՐԻ ՅԵՐԳԸ

Հառա՞ջ, միշտ հառա՞ջ... Անկցի գերության  
Կաշկանդող շղթան.

Այսոր քե վաղը— մերն և հաղթանակ  
Սուրբ տպատության:

Զե՞ վոր ծնունդ ենք ցուրտ նկուղների  
Անհաց ու բաղցած,  
Տառապանեների, տաճանելի սալին  
Կոտծ ու կոփված....

Զե՞ վոր տնցել ենք կյանքի նահինով  
Մենա՞լ, տարագի՞ր—  
Ռոժեղին՝ կլու, վզերս ծոսծ,  
Վորպիս քեռնակիր:

Վայելուչ կյանքի շեղանք մասնակից  
Գծուծ ու մրտու  
Տիրողի համար մանուկ հասակից  
Թշվառ մնացորդ...

Բա՞վ ե, ընկերներ. պարզենք կոշտացած  
Մեր ջլոտ ձեռքեր—  
Հառա՞ջ համարձակ, կյանքի մեծ քեմում  
Փոխվում են դերեր...

1908

## ԲԼԲՈՒԼԻՆ

Արի, բլրուկ, մեկ տեղ նստենք,  
Զեն-ձենի տանք ու յերգենք.  
Ես որվանից դառնանք աղքեր,  
Իրար խառնենք մեր ցավեր:

Անցա՞վ գարուն, աշում կուգու,  
Շատ հեռու չե և ձմեռ,  
Լաց, աղքեր ջան, ել վարդ չկա,  
Թո՞ւփը մնաց կիսամեռ:

Յերգենք, աղքեր, ցա՞վը յերգենք՝  
Դու քո մեռած ոլ վարդի,  
Յերգենք, աղքեր, ցա՞վը յերգենք—  
Յես՝ իմ ավեր վարանի...

Անցավ գարուն, արնու գարուն.  
Սուս և աշում ցուրտ ձմեռ,  
Ա՛յս, աղքերս մնաց անտուն,  
Քույրս բաղցից կիսամեռ...

Արի', բլրուկ, ցավը յերգենք  
Վարդի, ավեր վարանի,  
Արի, աղքեր իրար խառնենք  
Վումուս ցավը մեր սրտի...

1908

## ՄԻԶԱՉԳԱՅԻՆ ՅԵՐԳ

Յես քեզ չգիտեմ, յերբեք չեմ տեսել՝  
Գիտեմ, վոր դու կաս— ով ել վոր լինիս.  
Այն ցալի ես կրում, տանշանքն անտաել—  
Վոր տաշորում ե՝ քեզ, ինձ— ամենիս:

Գիտեմ, վոր լքված կամ սրտառոչոր  
Ծծում ես կյանքի քույնը լիւվին,  
Անհուն հույսերով նայում ամեն որ  
Մի ուրիշ կյանքի ծագող արևին:

Գիտեմ, վոր բանտի մահահառ գրկում  
Զեռքերիդ շղթա— ազա՛տ մտիերով  
Դեպ ափ դուրս գալու հույսն ես առկայծում,  
Գոռ հորդանեներին դիմում անխռով:

Յես քեզ չեմ տեսել, յերբե՛ք, չգիտեմ,  
Սակայն ամեն տեղ, գիտեմ, վոր դու կաս—  
Ու ահեղ ժամին, կովում մեծ, վսեմ  
Քո, իմ— ամենի ույժն ե անպակաս...

1906

## ԱՅՆՏԵՂ ԳՆԱՑԵՔ...

**Նվեր յերիտասարդուրյան**  
Այնտե՛ղ— ուր վոր լսեղն գեղջուկն անհաց,  
Տգետ՝ խավարի մեջ ե խարխափում,  
Յերաշտից, ցրտից, անսերմ մնացած  
Կծղած արտերը արցունեով քրջում.  
Այնտե՛ղ— հանքերի մոայլ խորքերում,  
Գործարաններում, ծովի ափերին՝  
Ուր վոր բանվորն ե քեռի տակ տնեկում.  
Գեք կուշտ ապրելու տենչանքը դեմքին.  
Այնտե՛ղ,— բանտերում՝ ուր շղթայակապ  
Հիվանդ որերի հերոսն անահ  
Տանջվում ե լոիկ, վշտով անփարատ,  
Որերը հաշվում անարգված մինչ մահ.  
Այնտեղ— անառակ, լկտի վորչերի  
Թունակի գրկում ապականուրյան,  
Ուր վոր մոռացված լսեղն ընկածների  
Կյանքերն ե մաշվում առանց գրության.  
Այնտե՛ղ— ուր չկա՛ վո՛չ հույս, վո՛չ հավատ,  
Վո՛չ սերմիություն, վո՛չ մի սփոխանիք—  
Ուր վոր կեղծիքը, ուստի հուսահատ  
Խշում ե բարուն ու չկա՛ փրկանի—  
Այնտե՛ղ գնացե՛ք...  
Այնտե՛ղ գնացեֆ— վեհ սոյիալիզմի  
Լույսը տեսնելու այն մութ խավերում՝  
Ուր վոր իդեալը խոր տանշանքների  
Մեղսոտ սեղանին միշտ զոհ ե բերվում.  
Այնտե՛ղ գնացե՛ք— նրանց հավասար  
Մարդկային կյանքի լուծը տանելու՝  
Վորպիս «հովիկ ժագ» իր հոտի համար  
Պատասխանակու...  
Պատասխանակու...

1908

## ՀԱՆԳՅՐԵՔ ԶԱՂԵՐԸ

Խավա՛ր ե... զիշեր... հեռո՛ւ գենիքում  
Մըշուշի միջից դալուկ դեմքներով  
Նիքում են անգույն աստղերը տրսում,  
Սոսկումով պատաժ մարմըրում շուտով:  
Տըներում և հողը. շնչով մահահու  
Վիշտն և գալարվում յերկրի յերեսին,  
Ոդի թևերին կըսկիծի լացու  
Մրմունջ և հնչվում, չկա՛ և լուսին...  
Բայց դո՛ւք կամեցաք մրցել յերկնային  
Վառ կանքեղմերի լույսի հետ նսեմ,  
Ցեվ ձեր բագմաքիվ լապտեր-ջահերին  
Մի ակնքարբում կյանե տվիք վսեմ:  
Ցեվ ահա մըռայլ, անմարդ փողոցում  
Մեջ կեսդիշերին ձեր պալատներից  
Շո՛ղում են լույսեր մքուրյան ծացում  
Շենք գարդարված պատուհաններից:  
Դուք տո՛ն եք տոնում ու զվարճանում  
Այնտեղ՝ հյոյակապ մտքի, հաննարի,  
Վոսկու, արծարի, վայելի գրկում—  
Ու բարեմաղբում ամենին բարի...  
Դուք տո՛ն եք տոնում ու զվարճանում,  
Ուր ամեն քարը ունի պատմություն  
Ցուր տակը նըզմած քշվառ գանգերի,  
Ուր վոր աղյուսը ծծել և արյուն  
Ու կարիմերը— աղի քրտինքի...  
Դուք տո՛ն եք տոնում խրոխտ քնդացնում  
Ուրա՛խ քրքիջով բարձր պատերը,  
Վորանց վրայից քաղցած, անխնդում  
Հնկավ քշվառը, փշրեց վոտքերը...

Ցեվ լապտեր-ջահեր շողում են պայծառ  
Ու լույս տարածում ձեր կուշտ դեմքներին  
Մինչդեռ խիզներդ կա՛րծր և ինչպես ժայռ—  
Մշտական խավար՝ սրտերիդ բաժին:  
Հանգցրե՛ք ջահերը...

Ցեվ քո՛ղ շարեշար ձեր նոխ սեղանի  
Շուրջը հավաքվեն քաղցած ու տկլոք  
Անտեր վորքերը այն քշվառների՝  
Վորոնց դուք քողիք առանց հոր ու մոք:  
Ցեվ քող շարեշար գծուծ, վոտարաց  
Շեմքներդ լիզող հավաքվեն մայրեր,  
Վոր փողոց ընկան մուրալու չոր հաց  
Ու ձեր պալատում փնտրեն շիրիմներ  
Այն բանվորների— ում կյանքի գնով  
Ցերկինք բարձրացան շենդ տմերիդ  
Բարձր պատերը նարտար հանդակով  
Վարդակ լինելու փարքամ կյանքներիք:  
Ցեվ քո՛ղ շարեշար, արնոտ, ուշաբազ  
Հոշոտված մարդկանց ու ուրվականներ  
Խոնավ փոսերում քողած չօր դագաղ՝  
Զեզ այցի յեթեն տեսնով մահարեր...  
Ցեվ հետ տո՛ն տոնեն ու զիշարնանան  
Այլանդակ կյանքի վայրագ քրքիջով,  
Ցերգեն գրկանքի յերգը հոգեհան—  
Չոր հացի յերգը— մահվան մրմունջով:  
Ցեվ խա՛վարի մեջ խավա՛ր գործերիդ  
Պատմեն արգասիք քշվառ անցքերի  
Ու հանեն ահեղ դղորդ ու շոինդ—  
Անարդարության ու կապանքների...  
Հանգցրե՛ք ջահերը...

1906

## ԲԱՆՎՈՐՆԵՐԸ

Այդ մենք ենք գալիս—  
Մաշված բանկոների, յուղոտ ու մրաս,  
Տրորված գտակ, աղոտ մազերով,  
Մեծ մասամբ դեղնած, գծուծ և բոկոտ,  
Յերբեմն դժգույն, յնըրբեմն անխոռվ,  
Յերբեմն բաղցի, լուռ տառապանքի  
Աև կննիոների անջինջ կնիքով,  
Յերբեմն ըմբոստ արհամաշտինքի  
Անզուսապ զայրույթի վրեժի քույնով.  
Դեռ վաղ ծերացած հոգեմաշ ցավից,  
Լույսի, քարմ ոդի տենչանք դեմքերիս  
Ու մարդավայել ապրելու հույսից  
Դեռ խո՛ր վերքերի կսկիծ սրտերիո—  
Այդ մե՛նք ենք գալիս...  
Մե՛նք, բանվորներս՝ տողած փորերի,  
Շերտավոր ճարպի, վոսկու դեղերի—  
Անվարու մշակներ...  
Մե՛նք, բանվորներս՝ վշտի, արցունքի,  
Կիսաբաղց կյանքի, բանտի, ախորի—  
Անբաժան ըմկեր...  
Մե՛նք, բանվորներս՝ ապրելու ահից  
Կյանքի շուկայում ստոր վաճառքից—  
Եժան ծախվածներ...  
Ո՛, մեծ տղրուկներ, մարդկային կյանքի  
Ստեղծագործության անարդ խեղդիչներ.  
Դուք՝ փարքամության, անառակ տենչի  
Քնած խիդերով քմրած խլուրդներ.  
Դուք՝ ամոքապարտ գերեզման փորող  
Գարշ դահիններդ սուրբ ազատության.

Զեր նմանների արյունը լափող,  
Բողոքոց հույսների դեվեր հոգեհան,  
Գուցե չե՞նի շոյում մեր տանշված դեմքով  
Զեր նուրբ ջղերը— հոգով բաղցածներ,  
Դուք՝ կուշտ մարմիններ։  
Չե՞ վոր մեր արյան մի-մի կաթիլով,  
Աղի ու լեղի քահած քրոնքի,  
Դառն արցունքների անվերջ հեղեղով,  
Մեր բաղուկների հուժկու, ժրաշան,  
Կոր քիկունքների, հոգու տագնապով,  
Մեր գլխին պատրաստ ամեն մի վայրկյան  
Չարաբաստ մահվան ամլուր սարսափով  
Սնունդ եք առնում,  
Ապրում յուղ կապում...  
Ցեկ վաստակներիս չնիմ փշրտնեներ  
Դժգոհ շպրտում բաղցած ամբոխիս.  
Կասես մարդկության մեմք խորք զավակներ—  
Դուք վայելչության, ամանդար կյանքի  
Ընտիր ըմբիշներ...  
Հա՛, մենք ենք գալիս—  
Դարեվոր վշտի զրկանքի քովից,  
Հալածանքների, գարշ ստրկության  
Մոռացված խավից—  
Կրծքով փշրելու վառքը տիրողին,—  
Գահը բռնության— ստրուկի շղթան,—  
Նոր ուղի հարքել մեր նմաններին,  
Արժանի կրչման— հավասարության  
Այդպե՞ս ենք գալիս...

1906

## ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ

ՓաՌՔ— բազմաչարչար ստրուկ մարդկության՝  
Տառապանքների, վշտի աղբյուրին.

Կյանքի հեղեղում չարի խորտակման  
Անոելի կռվի մարտիրոսներին:

ՓաՌՔ— գրկանքների մեծ անապատում  
Խիզախ, աննվան մագլցողներին,  
Քաղցից նվազած՝ երապարակներում  
Հացի վրեժի յերգ յերգողներին:

ՓաՌՔ— սրախողխող ու գնդակահար  
Քաջ ըմբոստների լուռ շիրիմներին,  
Մոայլ հանքերում ընկած շարեշար,  
Մմբած, տրորված ու դիտակներին:

ՓաՌՔ— թիկունքներին՝ ծոված քեռի տակ,  
Կոշտացած ջլու ժիր բազուկներին:  
Փառք բանվորության միության սղակ—  
Հպարտ փողփողող կարմիր դրոշին:

ՓաՌՔ ի բարձունս սուրր ազատության  
Նորածին վոգուն՝ տանջանելում ծնված:  
Միշտ փառք և նրան, ով համայնության  
Խաչն և փրկանքի ուսերին դրած...

1908

## ՍԵՎ ՇԼԹԱՆԵՐ

Այն լույս որերի վառ գարնան համար  
Ջեզ՝ ու շղթաներ, իմ կրծքի վրա  
Կրում եմ լոիկ, տանջվում անդադար՝  
Գիշերը՝ անեռուն, ցերեկն՝ անզգա:

Այն լույս որերի— սուրր ազատության  
Ցերկունքի ցալն և իմ հոգին կիգում,  
Կեդեքված կյանքիս անվերջ դառնության  
Միայն հույսներով վերջ եմ յերազում:

Այս, ու շղթաներ, ամարգ հանգույցներ,  
Դուք բիրտ կարգերի և' ույժ և' տաղանդ—  
Իմ կրակ սրտիս իդան անձնվեր  
Մոլի բանության դրել եք պատանդ:

Այս, սեղ շղթաներ, ժանգու ողակներ,  
Դեկ զընգզընգացեք հիմնը հաղթական՝  
Այն լույս որերի հիմնը անվեհեր  
Ցեղ ձեր գարշելի վաղբերգը մահվան...

1908

## ՅԵՐՁԱՆԻԿԸ

Գիշերն իջալ, ճամբար ընկալ  
Մայր-լուսին,  
Մի անտարբեր, անհոգ ժպիտ  
Յերեսին...  
Ամպիկները նրա ճամբին  
Բոլորած  
Յետ-յետ փախաձ՝ կասես լույսից  
Մոլորած:  
Ուր եֆ փախում, այ տխմաքեր,  
Շող-լույսից...  
Շուրջը պատեֆ, շողեր առեֆ  
Յերեսից...»  
Անպիկները տխուր, տրտում  
Լողալով...  
Յերգ յերգեցին ևեծկլտանեից  
Դողալով.  
—Աշխարհի մեջ տառապանեի  
Մարդկության  
Աղի-լեղի արցունիքները  
Մեզ ծնան.  
Մենի վեր յելանի յերկնից գուր-սեր  
Հայցելու,  
Ժանտ գերության կսկիծներին  
Վերջ տալու...  
Լուսինն ավաղ, տիրոջ առաջ  
Բարեխոս  
Չուզե լինել- անտարբեր ե,  
Լուռ, անխոս...

Յետ ենի փախչում, լույսից խորշում  
Մեր ցավով՝  
Յերջանիկ ե, սիրոը ժարե՝  
Անխռով:  
Առավոտ վաղ յերկիր կիշնենի  
Անխնդում,  
Շաղիկների նորաբողբոջ  
Թերքերում,  
Կերպենի վիշտը տիեզերքին  
Խեղն մոլոր.  
Միայն նա յե վշտին ընկեր  
Ու սովոր...»  
Ու լողացին անպիկները  
Յերկնենում,  
Յերկրի վշտով, լուսնից յետ-յետ  
Անլքում:  
Առաջ լողաց արագ-արագ  
Մայր-լուսին՝  
Մի անտարբեր, անհոգ ժպիտ  
Յերեսին:

1906

## ՀԱՌԱՇ ԱՆՎԵԼԵՐ

Հառա՞ջ անվեհեր, հառա՞ջ միաբան,  
Արքնացած կյանքի ծագում և արփին.  
Շողերը պայծառ, լուսով անխափան  
Հույս և ներշնչում կովի տագնապին:

Յեկ որըստորե բոնակալ ուժի  
Շիրիմն և փորվում խո՞ր, անդնդային,  
Կոնքագործության սև մահագուժի  
Շեփորն և հնչում ճայնով յերկնային:

Յեկ որըստորե շարքերը կովող  
Անում են ըմբոստ անձնուշացներից,  
Անհայտության մեջ հոգին դեգերող  
«Վրե՛ժ» են կանչում խոնակ հյուդերից:

Յեկ գիտակցության շունչն ամեն սրտում  
Մրրիկ և հանել արդար պահանջի,—  
Ով ընկերական կոյվն և մտնում,  
Նա վոչ մի ուժից հետ չի նահանջի...

Հառա՞ջ անվեհեր, հառաջ մինչև վերջ  
Սուրբ նակատակին միշտ հավատարիմ—  
Մահըն անմահ և արդար կովի մեջ  
Յեկ ուխտատեղի՝ մարտիկի շիրիմ...

1917

## ՏՐՏՈՒՆՉ

Իմ մոմուռ, միշտ անլուր ցավերգով  
Ա՛յ, անզին, քո հոգին ձանձրացա՞վ,  
Վոր անդարդ ու հանդարտ յեզերքով  
Հեռացար քեզ համար, առանց ցավ:

Խոկ յես հեզ, փրփրադեղ ծովի մեջ  
Պիտ լողամ ու դողամ մինչև լույս.  
Մինչ ծագի նոր այզի լուսանչ  
Վառ արփին սեվ ափին արշալույս:

Լուսաշաղ, հուսաշաղ ջինջ շողին  
Անհառաչ ընդառաջ յես կերպամ,  
Յեկ պսակ ու դրոշակ նազբողին  
Կը հյուսեմ յես վսեմ ու փարքամ:

Դու խղնուկ, կամացուկ յետ կուգառ,  
Կը ձգսես գողի պես ինձ սիրել.  
Իմ ույժից, վրեժից յետ կերպաս  
Հառքված և ատված անարգել:

1907

## ՅԵՐԿԻ ԶԱՅՆԸ

Բարբարսու ուժի անվերջ դավերից  
Ավեր և դարձել յերկիրը պարարտ—  
Նրա այն կրծքին ամեն խավերից  
Անեծն և հնչում կյանքի մնդապարտ:

«Ազգեր միացեք... կուրծքս և խանճվում:  
Անտառներ լափող երդեհից անշեշ.  
Արյուն արցունենալ հողս և հունցվում  
Լացը տարածվում բերքի շերտիս մեջ:

Կարուտ և հոգիս գարնան դալարի,  
Ցողազարդ բույսի, յերգին սիրահար,  
Խոնջացած դեմքիս ել չեն գուարվի  
Խնկարույր ծաղիկ, քռչուն ոդապար:

Չի յեռնում կրծքիս անդուլ աշխատանի,  
Գութանի, բահի փայլին եմ կարսու.  
Կարծրացած արյուն դառել և պատանէ  
Ճնշում և վորպես շղթա մեռ ու վուտ:

Յես մեզ կյանի տվի ազատ հյութերից,  
Ստկայն դուք դառաք ստրուկ, գետնաքարշ  
Խոպառ խորթացած հարազատ հոգից  
Մըտաք լծի տակ հակումներից գարշ:

Յես մեզ ծնեցի ազատ, ինքնիշխան  
Ճնշեցիք իրար անարգ մեռքերով.  
Իմ բարիքներից կոփեցիք շղթան՝  
Բոնացաք սրտիս, լեցուն բանտերով:

Իմ բյուր գանձերը մեզ քողած ավանդ՝  
Յես մեզնից մեկին չեմ գրկել յերբեք.  
Բայց դո՛ւք անմիտներ, կրծքիս արգավանդ  
Սահմաններ դրիք մտքով դյուրաքեք:

Ազգեր միացեք-իմ ազատ կրծքից  
Ճնշեցեք իսպառ դավը մարդասպան—  
Սրիք ինձ մոտիկ, հեռու անեծքից՝  
Ազատ ապրելու՝ յես մեզ ապաստան...»

Յեվ ճայնը յերկրի, վես, խորհրդավոր  
Իր ըմրոստ կոչի փողն և հնչում.  
Բոնության ուժը սարսափած, մոլոր  
Վերջին գոհերով անդունդ և փախչում.

1907

## Յ Ե Ս

Տիեզերքի վերքի յերգն եմ  
Չայնս հզոր, մշտական,  
Մեռնող դարի յեղերերգն եմ  
Ցեվ վրեժի՝ խո՛ր ական:

Յես վազում եմ կյանքի դաշտով  
Ու վոդովում՝ սել հոգեր.  
Ուր ցավ, կսկիծ տապ յերաշտով  
Միլ ու ծաղիկ չեն քողեր:

Յես քոչում եմ խավարի մեջ  
Հույսի այդ գոռ սահմանում,  
Ուր վոճիրն է լոկ միահեծ,  
Վկան՝ աստված անվանում:

Ինչպես ուզում-յես ապրում եմ  
Տիեզերքում սեփական—  
Տիեզերքի վերքի յերգն եմ  
Չայնս հզոր, մշտական:

1907

## ԳԵՂԶԿՈՒՆԻ ՄՈՐՄՈՔԸ

Ինձի յերկինք ասաց սիրիք,  
Բերեց ծաղիկն ինձ համբույր.  
Հովն ել ասաց — հե՛չ մի տխրիք  
Ու սեր յերգեց ինձ բլրուլ:

Աղրյուրն ասաց — առավատ վաղ  
Արի գիրկս յարիդ տես,  
Մշուշն ասաց — աղջիկ չքնաղ,  
Ահա՛ մեզ քոյ հարսի պես:

Խոր ծորակն ինձ տեղ տվեց,  
Վոր յարիս հետ քագնվեմ.  
Պաղ վտակը մրմունց հանեց,  
Վոր մեր ձայնը չլսեն...

Բայց մատնեցին մեզ չարքե՛րը,  
Դյուտը խոսեց մեզ վրա...  
Ֆալջին ասաց — մեր աստղերը  
Իրար հեշ չեն մոտենա...

Ու ափուիս իմաց տվին.  
Ա՛յս... ծամերս քաշէշեց.  
Ատած տղին ինձ հարս արին,  
Կարմի՛ր որս խավարեց...

Չե՞ վոր յերկինք ասաց — սիրիք,  
Բերեց ծաղիկն ինձ համբույր.  
Հովն ել ասաց հե՛չ մի տխրիք  
Ու սեր յերգեց ինձ բլրուլ:

1907

## Ա Շ Ո Ւ Ն

Կանաչ ծառի,  
Ժիր ծիծառի  
Լույց գողտրիկ մեղեղին.  
Յեխոս հողում  
Յուրտն և քաղում  
Հբնաղ գարնան անշունչ դին:  
Մերկ անտառին  
Աստղը լոփն  
Դժկամ ցոլքով վայր նայեց,  
Սզավար քուն  
Աշխ, որն իբուն  
Ունայն փառքին զիլ վայեց:  
Բայց իմ հոգին  
Խափով ուժգին  
Յերերի մեջ կվազե  
Ամպին անքույր  
Տալով համրույր  
Մաղկոտ գարուն կ'երազե:  
Յեվ հուսաշաղ  
Մուսաս չբնաղ  
Լարն և հյուսում ներբողի  
Տեսակ-տեսակ  
Դափնից պսակ  
Ճակտին ըմբոստ հաղթողի:

1907

## Ա Ր Ծ Ի Վ Ը

Հսկա ժայռերի լանջին բարձրանիստ  
Արծիվը հպարտ՝  
Նստած եր հանդարտ:  
Հոգնած քեվերին նա տալով հանգիստ՝  
Յերկիրն եր դիտում  
Մտախոն, տրտում:

«Տխո՞ւր ե վորքան վարք՝ այն խորում.  
Յերկրում բռվանդակ  
Նանք լըծի տակ  
Հեծում են մարդիկ, տնելում բանտերում  
Անազատ կյանքից,  
Հնշշված զրկանքից:

Ասում եմ նրանց՝ յես, անքան քոչուն՝  
Յերերի զավակ.  
Ազա՞տ յերկնի տակ  
Զայն ունիմ հզոր, նիչերը՝ հնչուն.  
Յերբե՛ֆ չեմ սողում  
Վորպես գա՞րշ սողուն...

Յերբե՛ֆ չեմ տեսել մարդուն բանավոր  
Բարձրունեներ շրջած,  
Յեվ ազա՞տ շնչած  
Կապույտ անհունի շունչը փառավոր՝  
Ինձ պես նրաշակ,  
Թոփչի ծարավ...

Ի՞նչ կա կյանքի մեջ այնքան ցանկալի,  
Չերք՝ բաց քեզերով  
Ոդը նեղքելով,  
Թռչում ես հեռու տեսչով անձկալի  
Ազատ դեպի վեր՝  
Հպա՛րտ, անվեհեր...»  
Ասաց արծիվը... և քեվատարած  
Սըլացավ ոդում.

Խսկ վարն՝ անդնդում  
Ցուրտ տառապանքից լա՛յն, համատարած,  
Խեղն մարդն եր տելքում  
Անիծված կյանքում...

1907

### ԱՄԵՆՔԻՆ

Ով վոր լինիք,  
Ուր վոր լինիք՝  
Զեզ հետ ե միշտ իմ հոգին՝  
Յեվ ամեն տեղ  
Յերգս անշեղ  
Հետամբում ձեր կյանքին:  
Հե՞ր դուք այդպես,  
Սողունի պես  
Գալարվում եք խե՞ղն, տարտա՞մ..  
Սեվ ժխորում  
Շիրիմ փսրում  
Մարդակայել գոյության:  
Հե՞ր դուք այդպես,  
Խլուրդի պես  
Խուլ վորչերում անտարել  
Կասես յերեք  
Զարքնելու չեֆ  
Մեղկ քմբիրից նիրհարել:  
Ով վոր լինիք,  
Ուր վոր լինիք՝  
Մեր ու ջահել— լծի տակ  
Այդ նորտ կյանքին  
Տառապանքին  
Բաց ե անդունդն անհատակ,  
Վոր պիտ կուլ տա  
Յեզ ամխնա,  
Անձայն, անլաց, անմռունչ,  
Վոր պիտ մարե

Ու պաշարե

Չեր վշտարեկ նիշն ու շունչ :

Ով վոր լինիք,

Ուր վոր լինիք՝

Շեր ու ջահել լծի տակ

Չեր նորու կյանիքին —

Տառապանիքին

Կա մի անմար արեգակ .

Վոր կռվի մեջ

Պայծառ, անշեց

Շողն և մաղում հուսաշագ .

Լոկ կռվողի

Հարքում ուղի ,

Ափ հանելով անհապաղ . . .

1907

### ՀԱԿԱՊԱՏԿԵՐՆԵՐ

Այստեղ՝ խրախնամի շեն պալատներում ,

Վոսկի և արձաք ,

Սեղանը առատ .

Այստեղ՝ սեվ կարիք, ննշում, լավող սով .

Վորքերի լաց, կոծ ,

Քաղցածներ անզործ . . .

Այստեղ՝ շքեղ փառք, անարժան պատիվ .

Գեռքեր արյունոտ ,

Խեղմեր մրուրոտ .

Այստեղ՝ կախաղան, աբսոր, քանտ, մորակ ,

Կյանիքի սեվ զիշեր ,

Տրորված լեշեր . . .

Այստեղ՝ փափկասուն, սպիտակ ձեռքեր ,

Կյանիքից հղփացած՝

Փորեր յուղ կապած .

Այստեղ՝ կոր քիկունիք, ձեռքեր կոշտացած ,

Արտոնյալների

Բիրու ույժին գերի . . .

1907

## ՀԵՏ ՏԱՐ ՔՈ ԽԱԶԸ...

Անձա՞յր տափարակ... գետինք — սառած,  
Չյան կարծր շերտի հյուրբնկալ գրկին  
Դեմքը ցավագար խնամքով ծածկած՝  
Լուր մտորում ե վիշտըն անմեկին...  
Բժաշունչ ժամին վազում սանձարձակ —  
Վոռնում ե, նչում... կամ պապ քեվերով  
Ծեծկում ե գետնին և յուր անգունակ  
Հի՞ն կսկիծներից յերգում ե լալով:  
Մառախուղը գորշ տճել փեշերի  
Ծալքերն յերկնեում համարձակ ճգել,  
Ծածկել ե չժնադ լուսնի, աստղերի  
Լուսաբեր ցոլքն — ազաւ-անարգել...  
Յել ահա հեռվից ինչ վոր մուր գծեր  
Սեվին են տալիս, նոնում անհաստատ,  
Ճոնում, յերերում՝ կասես ազռավիներ  
Քաղցից շվարած, ծարավ կամ ժնիատ:  
Յել դաշտավայրի սպիտակ կրծքին  
Կորպես չորացած վերքերի սպիներ —  
Այն սեվ գծերը լուր և մոլեզին՝  
Տազնապ են ազդում, սարսուռ ահարեր...

Ահա կանգ առան... իսաւնվեցին իրար...  
Մի խուր հարվածից տնիաց ու դոլաց  
Ամայի դաշտը... ժամին քեվահար  
Պինդ փարվեց յերկրին, ժարացած մնաց:  
Յեվ մի սոսկալի, խոլ հեկեկանքի

Խեղդած հեծկլտանք տարածվեց դաշտում,  
Մի ամոք-ապարտ, մեղսուտ դատրանքի  
Դիվային քրքիջ շշնչաց ողում:  
Ու աղեկուր լալազին վշտի  
Հոգոց դուրս քուալ յերկրի յերնսից.  
Յեվ սեվին տվեց սեվ հաղթանակի  
Գարշելի փառքին պատրաստված մի ցից...  
Ամենքը լուր են... Մի լուր պատմություն,  
Մարդկային կյանքի մի հսկա հոսանք.  
Ապրածի՝ վերջը, նորի՝ հայտնություն,  
Դարերի ճնշման պոռք-կումի քափից  
Ըմբոս վիժվածքը տառապանքների,  
Անարգ բռնության սուր նիրաններից  
Նորածիլ սաղմը ազաւ մտքերի,  
Հավասարության միակ փրկարար  
Վես գիտակցության ծնունդը հսկու—  
Որնիբուն փառը, անվերջ հոգմահար  
Տիրող կարգերի լուծն արմինյա՝  
Կանգնեցին անխոս, դեմ առ դեմ այնուեղ—  
Այդ վոչնչացման տիուր հանդեսի  
Սոսկալի ժամին... այն ժամին ահեղ,  
Յերք սոսկ մարմնացած դարը կը խոսի...

• • • • •  
Քամին դողալով շոյում ե, գգվում  
Այն լուր դեմքերին և իր վշտահար,  
Մենակ, անընկեր կյանքից անխնդում  
Պատմում ե նրանց, լալիս անդադար:  
Նա մերք քծնելով սեվ ֆարաջայի  
Յերկար փեշերն ե վախկոտ փողփողում,  
Յեվ այն ծեր ձեռքում բռնած սառ խաչի  
Շորջը զարմացած զալարվում, խաղում:  
Նա մերք այն դաժան դեմքերից ցասկու

Թոշում և հեռու ու սյունին դիպչում,  
 Կամ սյունին կապած եյակի քախծոտ  
 Այրվող նակատը պաղ քեվով շփում:  
 Թշվա՛ռ եյակի... նրան վերցրին  
 Մի պայքած ոռումքի փշրանքների մոտ,  
 Վորտեղ փարվել եր — իր ջահել կյանքին,  
 Զախշախված մարմնին — առանց ձեռ ու վոտ,  
 Բոնության ննջող հանույժին հարմար...  
 Մի անդարձ անդունդ — ըմբռուտի համար...  
 Յեկ ահա ինքը՝ մարդկության վորդին,  
 Տառապանքների, անարգ բռնության  
 Ըմբռուտ մարտիկը — իր նմաններին  
 Փրկելու համար յելալ կախաղան:  
 Ի՞նչ եռգ խավարի սեկ եռգիներին  
 Վոր նա կես մարդ ե... վոր նա տրորված  
 Արյունաշաղախ մի վիրուտ մարմին,  
 Սպիների մի ցանց, ձեռք-վոտք կորցրած...  
 Զե՞ վոր թշվառի խիզախ կրծքի տակ  
 Դեռ յելս տրովում են զարկերը վերջին,  
 Այն ըմբռուտ եռգու տենչն անխորտակ,  
 Հագեցած վրեժի ցոլք կա աչերին:  
 Զե՞ վոր արմաքամ, չորցած շրբերում  
 Արհամարհանքի խաղում և ծպիտ,  
 Ու մի ստահակ, գոհունակ խնդում  
 Տիրում այլանդակ մարմնին չոր, վտիտ...  
 Հա՞ կատարվե՞լ ե... պետք և շուտ մեղցնել  
 Բախտավլորներին արհամարհողին.  
 Պետք և շո՞ւտ խեղդել, արմատից խլել  
 Ըմբռուտ խլրտման ծիլերը վերջին...  
 Յեկ ահա թշվառ դառապարտյալին  
 Լուր մոտենում և ծերուկ ժահանան՝  
 Սորուկի շղթան փշրել ուղղին—  
 Համբռուրել տալու հավատի շղթան...

Հե՞տ տա՛ր քո խաչը — գործիքն հարմար  
 Անվերջ կեղծիքի, լալիր բառության.  
 Անխախտ պատճառըն — արլած զոտնահար  
 Ամեն մի տենչի թշվառ մարդկության:

Հե՞տ տա՛ր ազգերի տիտան կապանքի —  
 Վեհ ճգտումների, սուրբ նշանարտության,  
 Գիտակից մտքի — ազատ վայելքի,  
 Շաղկապ իդեալի — հալասարության,  
 Յեկ սասանական անվերջ ջարդերին,  
 Անմեղ գոհերի անգութ սպառման՝  
 Վաղո՞ւց կեղծված ժանգուտ բանակին...

Հե՞տ տա՛ր մոլեռանդ, անմիտ ու անհամ  
 Կեղեցիչների զենքը — բառաքեվ՝  
 Վոր պաշտվեց յերկա՛ր, յերք ամեն անգամ  
 Տնիւմ եր մարդը — մտքով կո՞ւյր, անքե՞վ...  
 Հե՞տ տա՛ր ... նրանից արյուն և ծորում,  
 Վազում արցունքի, շարավի հեղեղ,  
 Բյուրավոր, անքիլ գոհերի լիում—  
 Ղողանջում մահվան նզովենվ ահեղ...  
 Հե՞տ տա՛ր — տրորված ըմբռուտ գանգերի  
 Տաֆ-տաֆ, բարախուն — արյունաշաղախ  
 Թարմ ուղեղներից — հավատողների  
 Կոփանքի սպլը — և խաչդ՝ ալա՛դ...  
 Ահա մեր խաչը — սեկ սյունն անարգ,  
 Փրկության համար հանված Գողգորա-  
 Ահա և ինքը՝ նոր լույսի զավակ,  
 Վոր ազատության հարքում և նամրա...

Բժաշունչ քամին վշտից կարկամած  
 Վոռնում և, ճշում յուր պաղ թերուլ  
 Ծեծկում և թմբին, կույտերի սառած  
 Փշրանքը արմոտ գուրգուրում լալով...

## ԿԱԼԱՆԱՎՈՐԻ ՅԵՐԳԸ

Զնգա'... հա, զնգա', գալարվիր, ննշի'ր  
Վորքան ույժ ունիս.  
Սեվացած, ժանգոտ, պաղ սղակներով  
Պինդ հպվի'ր մարմնիս,  
Քամի'ր արնաբամ իմ ձեռ ու վոտից  
Վերչին հյուր ն իսպառ,  
Ծվատի'ր սմբած, չորացած կաշուց  
Վող կեցած պատառ...  
Մենակյաց կյանքիս յերգերը տխուր  
Խեղդի'ր քո հեղիով,  
Հիւլանդ յերազիս ցոլքը խափուսիկ  
Մարի'ր անեծքով...  
Զնգա'... հա, զնգա զիշեր և ցերեկ  
Անխափ և անքուն  
Մեղսատ բանության վորպես արժանի  
Միա՛կ փրկություն:  
Զնգա' շարունակ, վըրդովի'ր բանտիս  
Գիշերվան անդորր,  
Սեղ ժանգդ ներկիր վառ կարմիր գույնով  
Արյունես ծոր-ծոր...  
Ահա' նոսրացավ խոլ աղջամուղջի  
Անքափանց խավար,  
Նորածին արփին կապեց յերկնեում  
Լուսեղին կամար...  
Դե՛հ, զնգա ֆիչ ե՛լ, քո ստոր իշտոքին  
Մոտ և սեղ որիաս՝  
Արքնացած կյանքի վես գիտակցության  
վառ լույսն և անսառ:

Կուռ՞մ եւ դքսից ներդաշնակ յերգի  
Աղմուկն հաղթական,  
Նա և ցուցարար իմ ընկերներից  
Քո դատը մահվան:  
Շուտով կպոռք-կա այն լույս աշխարհում  
Ահոելի մի դեպք՝  
Ցեղ դու, ով շղթա, կմնաս անտեր,  
Մոռացված անվետ...  
Կամ թե դարբնոց կերքաս կույտերով  
Կուռ սալի վրա՝  
Կը փշուն հոգիոդ և դու կդառնաս՝  
Գործիք առորյա...

Դե, զնգա ուժեղ, վորքան ույժ ունիս—  
Պինդ հպվիր մարմնիս—  
Վերջին ցնցումիդ տագնապի քափից  
Թող հրճվի՝ հոգիս...

1907

## ՎԱՅ ԶԵԶ, ՎԱԽԿՈՏՆԵՐ

Մեր դժբախտ կյանքին անհույս, անարեվ  
Չկարծեք քե շուտ, կամ քե երաշով  
Յանկալի այզի կծագի արել  
Նոր հորիզոնից ջինչ, ազատ ցոլքով:

Մեր վիրտ սրտի վերքերը խորունկ  
Դեռ կը մոմուան — չեն ծածկվի հանկարծ.  
Սեվ որում խանձված ծառ, ծաղիկ ու տունկ  
Չեն ծաղկի հողից արյունով ներկված:

Մեր հիվանդ քնից վառ յերազների  
Ցնորքը շենք անթիվ, անպտաւդ  
Կցնդվին անհետք, սոսկման որերի  
Կը մնա զրկանի, քաղց ու ցուրտ նկուղ:

Դարերով կոփված կուռ շղթաներին  
Լոկ մի հարված չի փորի անդունդ,  
Տանջանիք բռվում մշտակյաց զերին  
Մի պատռո հացով չի առնի սնունդ:

Ուժ ե հարկավոր — անհողողդ հավատ  
Կոր թիկունիներից տիտան պատմէնէր...  
Հորձանին ե զալիս փորձանիք տարափ  
Ահա կրափիլի-վա՛յ ճեզ վախկոտներ...

1907

## ԳՈՒԹԱՆԻ ՅԵՐԳԸ

Ճե՛յ... վեր կա'ց գեղջուկ դո'ւք, լնկեր-յեզներ՝  
Քնա՛նք շուտով արտ.

Հուժկու յեռանդով սև կուրծքը նեղենն  
Մայր հողի պարարտ:

Շրջենք յետ-առաջ, յերկա՛ռ գծերով  
Փորենք ակոսներ՝

Սուրբ աշխատանքի վարպես ժրաշան,  
Անվախ հերոսներ...

Արեվը ահա՛ փայլում ե վերից  
Գրառատ սիրով,

Ան՛ուշ գոլորշին շղարշի նման  
Ճոնում դաշտերով:

Բացլած բներից գործի յե դիմում  
Անհամար մրցյուն,

Մայր-հողն ե ծնում, գետը տարածում  
Թուլիչ կարկաչյուն:

Ճե՛յ... վեր կա'ց յեզնուկ, հերի՛ք մրափես.  
Վեր կա'ց սերմնացան՝

Գմանք շուտով արտ, շաղ տու՛ր հատիկներ  
Այնտեղ ցիրուցան:

Կարու եմ ինչպե՞ս հողի զով շերտում  
Դեմքս պարտկել՝

Վորտեղ գորշ վորդեր անհոգ գալարված  
Դիտեն միշտ պառկել.

Կուզեմ յես հյուրուտ ծիլերի ցանցեր  
Համբուրել սրտանց,  
Ճողի շշուկից արքել, մոռացվել

Խորքում անքափանց:

Հե՛յ... վեր կա'ց, գեղջուկ, վեր կացե՛ յեզներ,  
Մի՞քե չե՞ զգում—

Արտերը վազո՞ւց սերմի կարոտից

Լալիս են, սգում:

Այս ի՞նչ եմ տեսնում... գեղջուկն ե զալիս  
Գլխակոր, տրսում.

Կիսամերկ, գծուծ քախծոս հայացքով

Ինչ վոր վնիքնիքում:

Թշվա՛ռ, գարշ միջտ, գե՛ք կուշտ լինելու  
Չունեցար հնար...

Հատրուկ՝ կյանքի մեջ, արդար վաստակից՝  
Հեռո՞ւ, անհրնար...

1907

## ՄԱՆՆԵ ԳԵՐԱԶԱՆՑ

Գեր հեղաշրջման այս ժամին վսեմ

Հիվանդ դարերի փառքը քողնեյիք.

Յեկ անհաշտ որից դարուկ ու նում,

Ամենքի կողքին քիչ ույժը առնեյիք:

Ի՞նչ շահ դարերով հյուծվել անըզգա՞

Ունայն ցնորդի հյուսած վռատայնում.

Բնական գաճան՝ ձևաճալ հսկա

Յեկ մուրալ այնտեղ, ուր չեն ստանում:

Մամկան միամիտ հավատուվ արքած,

Իրական կյանքում անփորձ, անգիտակ,

Ինչ շահ դավերին դիմել գրկաբաց —

Կուրարեն մտնել ծանր լծի տակ:

Դե՛հ, յեկե՛ ապրենե՛ նոր կյանքով, նորից

Քանդենե՛ կապանքներ, փախչենե՛ ժխորից...

Ստրուկ առըելուց մասն ե գերազանց...

Թո՞ղ արեկ փայլի լոկ ազտ մարդկանց...

1908

## ՄԻ ԼԱՐ

Դու միալար մի' լար, անգին,

Այս կույք

Անբույր

Գիշերով.

Վերքիդ — յերգիդ բող իմ հոգին

Ծածկե

Վոսկե

Հուշերով:

Յես ժեզ մի եեզ, գրոտ մոր պես

Մի ջինչ

Անջինջ

Պատգամ տամ.

Յավից — դավից մնաս անտես

Յեվ միշտ

Անվիշտ

Ու փարքամ...

Քեզ ինչ քե ինձ բաժին մնա

Քո լեռ

Ու քեռ

Տառապանք —

Յես իմ դժխեմ կյանքում անմահ—

Յեվ յերգ,

Յեվ վերք,

Յեվ փրկանք...

## ՎՈԶ ՎԱԽ, ՎՈԶ ԼՔՈՒՄ

Վո'չ վախ, վո'չ լքում.

Թող ըմբոստ հոգում

Լոկ արդար վաղվա հավատք կայուն

Ապրի, հուրիսուրա,

Թող ժիր բազկի հետ սերն ել զգայուն

Վայելք չմուրա:

Զրկվածի համար

Մեր ուղին հարմար.

Բողոքն ու կոխվը՝ հարատեվ, ցասկոտ.

Մենք մարդում վայել

Մի կյանք կերտելու ընդմիշտ պահանջկոտ

Զանք չենք խնայել...

Մեր սիրուք տնման

Անհաղթ կմնա.

Կդառնա բանձամբ՝ լինե՛լ մեզ նման—

Չարին քշնամի,

Չգտել ոք առաջ դնել գերեզման

Լուծը դրամի:

Ի՞նչ բախտ ումենալ

Ուղի, և գնալ

Հուսուլ պատկած, անշեղ, անսայքամ.

Ու միշտ անվհաս

Ահի մեջ պահել արօնու գան ու բագ

Խաչ, կրոն, հավատ:

## ՎՈՂԶՈՒՅՆ ԲԵԶ

Հոգուս բոլո՞ր զանգակներն են դողանջում—  
Արժանացա ազատ կյանքի վողջունին.  
Ել վոչ մի ցավ ըմբռուտ սիրոս չի տանջում  
Մարդիկ — ընկեր, իրարու դեմ վոխ չումին:

Հիմք մեռավ . կեցցև հիմք մեղսալի,  
Վոր ընդլզեց մտքերն ատրուկ դարերով .  
Թոքափեցինք պատրանքը հին սխալի,  
Հաշտ արքմացանք այս նոր այզի արեվով :

Վո՞րքան ազնիվ տենչեր իջան մեր առաջ—  
Ազատ կյանքը արդար գործ է պահանջում .  
Ու յես հապարտ ծանոր քախտից թեկ առած  
Հոգուս բոլո՞ր զանգակներն եմ դողանջում:

Ո՛ , վողջույն ֆեզ, բյուր Վողջույններ գոհության  
Ազատուր-յուն կյանքի, խզնի և խոսքի .  
Գահավիժվեց ֆեզ վաճառող նեմից Հուլան .  
Արյունոտ են նրա որերն ու վոսկին:

1917

## ԴԱՐԲՆԻ ՅԵՐԳԸ

Դեհ, արագ նոնա դու, իմ ընկեր, իմ մուրմ՝  
Շիկացած յերկարին հարկածիր տնշեղ .  
Այս որից իմ գործն է շինարար ու լուրջ .  
Իմ ջանքը՝ լոկ սուրբ պարսէ, յերկարը՝ տաշեղ .  
Քանելուս ժամերը լա՛վ հաշված— թերկ՝  
Չեն հոգնի մկաններ անգո՞ւտ և զուր,  
Չի ծովի թիկունիս, միտք, հոգի ու թեվ,  
Չի ժամվի ուժս իսպառ, քրտինք՝ քան ջուր՝

Կոենք, կոփենք—

Հինք փոխենք .

Յերկարը տաք

Դողա սալին,

Ու վոտնատակ .

Վո՞ղջ մեղսալին .

Կոենք, կոփենք

Հինք փոխենք—

Յերկարը շեկ

Տա հացի գին,

Մտքերիս դեկ—

Խմատ կյանքին :

1917

## ՓԱՌՔ ՄԵԶ

Նայում եմ յես հետ՝ մաշվել ե շարքը  
Անսանձ վոնիկի.

Ել հացի ահը սրտերի վրա  
Խորշում չի բերի—  
Չի գերի բանուկ ձեռքերի ջանքը  
Դրամի ուժին.  
Վոր հնից ժառանգ խոցերն արմատով  
Մեր ձեռքով բուժվին:

Չկա՛ արտոնյալ սեփականության  
Ճնշում մեզ վրա.  
Ով վատնում կորով ու լարում միան՝  
Այդ հացն ե նրա.  
Նետել են փողոց գահն ել, քազն ել,  
Կրոնի շքառն,  
Վոր լույսը մնա մարդկային գործի  
Փրկարար խթան :

Ու նայում եմ հետ. այդ մենք նեղեցինք  
Սոսկումի ուղին.  
Ընկանք բարձրացանք շշմած դավերից.  
Մեզ մենա՛կ քողին...  
Մե՞նք տապալեցինք դարերի կերտած  
Կոքողը չարի.  
Մեզ ո՞վ եր տվել մարտիրոսներ  
Հրդեհն հանճարի :

Ո՛, փա՛ռք մեզ, հավերժ, անմեռ փա՛ռք, որհնենք.

Որինենք ամեն որ.

Նոր կյանք, նոր որեր, նոր միտք հանապազ  
Խինդ ու ամանոր...

Նայում եմ առաջ՝ հոգսի, կարիքի  
Տիտան պիրամիդ.

Սակայն, մենք զիտենք ծաղրել վոստխին  
Մեղկ ու միամիտ...

1921

## ԱՍԴԱԿԻՐ

Հանի՛ք պատյանից  
Դու սուրդ անպարտ  
Ու անահ կանգնի՛ք  
Դալիքի դիմաց,  
Կարմի՛ք աստղակիր...  
Կարմիք աստղակիր,  
Փառքով և նախշած քո անցած ուղին,  
Կարմիք կռվի մեջ  
Չունի՛ս մրցակից  
Ու չես' ունենա...

Քո զարկից փախան  
Ազնիվ գողերի  
Լեզնեները մուր ուղիներով,  
Ահարեկ, շվար,  
Յեկ արժեքավոր  
Մանրոցներ ուսած,  
Քաղցին անգիտակ,  
Անհայտ վայրերում  
Նորի կատկելու  
Անոռուն շան նման...

Քո զարկից փախան  
Վարձկան ու ծախված  
Թուլամորբները քալանի ծարալ,  
Վոր տիրողների շահերին գերի—  
Նենգ ու չարանյուր  
Արքաներին հաշտ—  
Զանացին լուիլ  
Մեր խորհուրդների տիրապետության

Փառքն ամրակուռ,  
Նորից կերտելու  
Գահի, շգրայի, մտրակի, քանտի,  
Վոնքի բռնության  
Գարշելի ուժը— դարերի ավանդ...

Քո զարկից փախան  
Գավահանները,  
Գահիներն արևոտ,  
Վոր պիդ ձեռքերով  
Խեղում էյին մեզ—  
Մեր տեսչերն ըմբռոս,  
Ու ծմակներում  
Միշտ հորդոր կարդում հալասարության...

Յեվ ահա նորից  
Չխցող տարրի, շահերով ձուլված  
Անհաշտ շարքերում  
Պատուհասների  
Շառվամ են ցանկեր  
Ընդդեմ մեր յերկրի...  
Չոյս տարվա հսկում  
Գուհավայրի վեցին կեղեքիչները  
Ամեն տեսակի,  
Կրոնի, ազգի...  
Մի տարվա հանգիստ  
Ու յետ են դառնում  
Քո ծեծած մարդիկ...  
Խոկ առ, աստղակիր,  
Հանիք պատյանից  
Քո սուրբ անպարտ  
Ու անահ կանգնիք  
Գաղիքի դիմաց...

1922

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՂ

1.	Ցերկու իսոսք	3
2.	Շուշանիկ կուրպինյան	5
3.	Ցես ըմբռասացա	11
4.	Արծիկ սերը	12
5.	Միգրէտ	13
6.	Մենք եւ միտհանք	15
7.	Դեկանմբերի որերից	16
8.	Ազատության զաղանջները	17
9.	Կը Հյուսեմ յերդեր	18
10.	Տար ինձ, մեծ հոսանք	19
11.	Մեր որերը	21
12.	Բանվարի յերդը	22
13.	Բլուրին	23
14.	Միջազգային յերդ	24
15.	Ախոնդ զեացեք	25
16.	Հանդուրե ջահերը	26
17.	Բանվարները	28
18.	Փառք ի բարձունու	30
19.	Սկ չգիտեր	31
20.	Ցերչանիկը	32
21.	Հասա՞լ անվեհեր	34
22.	Տրանսի	35
23.	Կեցցեն չարքերը	36
24.	Թող մաննենք պատվով	37
25.	Ցերկը ձայնը	38
26.	Ցես	40
27.	Գեղջկուհու մորմոքը	41
28.	Աշուն	42
29.	Արծիկը	43
30.	Ամենքին	45
31.	Հակապատկերներ	47

✓	32.	Հետ տար քո խաչը	48
	33.	Կալանավարի յերդը	52
	34.	Վա՛յ ձեզ, վախկաներ	54
	35.	Գութանի յերդը	55
	36.	Մահն և զերագանց	57
	37.	Թի լար	58
	38.	Վու վախ, վոչ լքում	59
	39.	Վողջույն քեզ	60
	40.	Դարբնի յերդը	61
	41.	Փուռաք մեզ	62
	42.	Ասողակիր	64



Տեխ. Խմբագիր՝ Ան. Գասպարյան  
Երևալլիչներ՝ Հ. Մահմուկյան և Վ. Ավազյան

Գլուխակ Իվաղոր՝ Վ—1140. Հըսս. №5073.  
Պատվեր 835. Տիրաժ 3000  
Թուղթ 64X92. Տպագր. 4 մմ.  
Մեկ մամ. 36480 նիշ.  
Հանդիմած և արտադրության 9 սեղմակքերէրի  
1939 թ.  
Առողջապահած և տպագրության համար 19  
հոյեր. 1939 թ.  
Պետհանուն և տպագրության համար 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0349729

36702